բուստն էր՝ 5 սպանուած 22 վիրաւոր։ Գրեթէ մինչև Օլթի, ամբողջ տարածութիւնը անցաւ հայերի ձեռքը։

Զանգիբասարից յետոյ կազմակերուեց և իրականացուեց նաև Բէյոյիւք Վեդիի դրաւումը։ Այնտեղ թշնամին ունէր մօտ 3000 կուռդ, 3 թնդանօթ, 9 գնդացիր և առատ փամփուշտ։ Ընդհանուր հրամանատար էր Թիւրք սպայ Մուստաֆա բէյը։

Հայերը հանեցին 26 վաշտ հետևակ, 7 հարիւրեակ ձիաւոր, 16 թնդանօթ, 1 զրահագնացք, կամաւորական խմբեր։ Ընդհանուր հրամանատարն էր գօր. Շելկովնիկեանը։

Կռիւները զարգացան հետևեալ ձևով*).

«Յուլիս 10–ին երեկոյեան մեր զօրամասերը Ղամարլուից ու Նոր–Բայազէտից յարձակման դիմեցին Բէյոյիւք–Վեդի գիւղը դրաւելու նպատակով։ Յուլիս 11–ին, Ղամարլուի ուղղութեամբ, յամառ կռիւներից յետոյ, դրաւեցին Կարայեազ, Զաթղռան, Ալի Մամեդ, Ենգիջա, Կոթուդ Աղասի, Բէգլու և Ներքին Կարաբաղլար գիւղերը։ Բէյոյիւք–Վեդիից հիւսիս մի վերատ հեռաւորութեան վրա՝ Գեաւուր Ղալասի լերան մօտ մենք հանդիպեցինք թուրքերի կողմից յուսահատ դիմադրութեան. Նոր–Բայազէտի ուղղութեամբ, յուլ. 11–ի երեկոյեան, մենք դրաւեցինք Աղբիլիսա, Մաղիւկ, Գեոլ, Զիդին, Մոգիւղ, Զաղին, Գերմանիս, Դոխնազ գիւղերը։ Մութն ընկնելուց յետոյ, երեկոյեան ժամը 9–ին, Գեաւուր Ղալասի լերան կողմից թուրքերը դիմեցին հակայարձակման, բայց 2րդ գնդի հանդիպակաց գրոհով յետ շպրտուեցին։ Նահանջողներին հետապնդելով՝ երկրորդ գունդը, տաք սինամարտից յետոյ, դրաւեց Գեաւուր Ղալասի սարը, ուր թուրքերը թողեցին բազմաթիւ սպանուածներ և մի Մաքսիմ գնդացիր։

Յուլ. 12–ին, առաւօտեան ժամը 5–ից 25 րոպէ անցած մեր զօրամասերը մտան Բէյոյիւք–Վեդի։

Թուրքերը փախչում են Դաւալու Զինջիրլիի վրայով»։

Բէյոյիւք–Վեդիում հայերի ձեռքը անցաւ 1 թնդանօթ, մի քանի գնդացիր, ռումբ ու փամփուշտ, ուտելիք։ Նոյն օրը երեկոյեան դրաւուեց Դաւալուն, ապա Գայլի Դրունքը, և վերականգնուեց երկաթուղային հաղորդակցութիւնը Ղամարլուի հետ։ Միաժամանակ գործողութիւններ էին կատարւում և Դարալագեազից, և յուլ. 16ի երեկոյեան մեր զօրքերը դրաւել էին արդէն Արաքս—Աղ–Ահմեդ գիւղ—Ղուչչի—Դեմուրչի—Բաշ–Նորաշէն—Ուլիա–Նորաշէն—Ախուր գիծը։ Ամէն տեղ, ուր երևում էին հայերը, թուրքերը թողնում և խուճապով փախչում էին։

Բէյոյիւք–Վեդիի կռիւներում սպանուեցին 15 սպաներ ու զինուորներ, որոնց հանդիսաւոր թաղումը տեղի ունեցաւ Երևանում, յուլ. 13–ին։ Զանգիբասարի ու Բէյոյիւք–Վեդիի մաքրագործումը աննկարագրելի ցնծութիւն առաջ բերեց Հայաստանի բոլոր կողմերում։

Յուլ. 16–ին, հայկական զօրքերի յառաջխաղացումը կանգնեցուեց, որովհետև Նախիջևանի Մահմեդական Ազգային Խորհուրդը պատգամաւո-

*) Հայաստանի Գլխ. Սպայակոյտի յուլ. 12 հաղորդագրութիւնը։